



ՄԱՐԺԱԹԵՐԹ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճալիք

Ժող. Տարի, Թիւ 25

ՄԱՐԺԱԹ

27 Պեկտեմբեր, 1897

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Ծաղիկի բաժանորդագինն է Տարեկան՝ Պոլսոյ համար 40, Գաւառներու համար 50 դրոմ. : Վեցամսեայ Պոլսոյ համար 25, Գաւառաց համար 30 դրոմ. : Հասարակ 30 փութայ : Բաժանորդագրութիւնը քիւի վրայ է. տարեկան բաժանորդները պիտի ստանան 52 եւ վեցամսեայները 26 քիւ Ծաղիկի : Պաշտօնական Գրաստունը յանձն կ'առնէ հաստատուել բաժանորդներու վճարները.

Եթէ Ծաղիկի հրատարակութիւնը ուր եւ է արգելի հանդիպի : Ծաղիկի բաժանորդներն իրաւունք ունին 100 այցեհարս նուէր ստանալու : Հանրոգոս ճիւղերու վերաբերեալ յօդուածներ եւ քրթակցութիւններ շնորհակալութեամբ կ'ընկու նոյնի : ՀԱՅՏԷ — Ծաղիկի վերաբերեալ ամէն ինչ պէ՛տք է ուղղել Պաղատայեան Գրաստունը, կր Պալիս, Սուլթան Համամ, քիւ 14 :



ՏԱՐԵԴԱՐԶ ԾՆՆԴԵԱՆ

ՎԵՀԱՓԱՌ

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

Օսմանեան լայնածաւալ պետութեան միլիտնաւոր հպատակները եւ առ հասարակ ամէն կարգի ժողովուրդը վաղը, Կիւրակէ մեծ հանդէսով պիտի աօնեն ծննդեան տարեդարձն

ՕՐՈՍՏԱՓԱՌ ԻՆԲՆԱԿԱՆԻՆ

ԵՒ

ՀԶՈՐ ՊԵՀԱՊԵՏԻՆ

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

Տէրութեան Աւագանին եւ հասարակութեանց պետերն յոստ կայսերական դահլից պիտի մատուցանեն միլիտնաւոր հպատակաց երախտագիտական զգացմանց հաւատարմքն վասն այն օգտակար տնօրինութեանց որք եղած են եւ պիտի ըլլան յօրէ անտի գահակալութեան նորին կայսերական վեհափառութեան :

Դպրոցներ, երկաթուղիք, երկրագործական հաստա-

տութիւնք, քարտիներ, փաճառականական սենեակներ, հզօր ապացոյցներ են թէ երկիրը օր քան օր կը բարգաւաճի եւ փառապանծ Սուլթանին օրով սկսուած բարեկարգութիւնք փութայ պնդութեամբ յառաջ կը տարաւին, ուստի ամէն բերնէ պիտի լսուի

ԿԵՅՅԷ ՆՈՒԼԹԱՆ ԱՊՏ ԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆ

Ոգոստափառ Ինքնակալն մեր :

ՀԱՅ ԳՐԱԳԻՏԱՅ ԲԵՐՆԻՆ ՀԱՍԸ

Մեր ազգին մէջ գրականութիւնը օրէ օր ծաղկելու վրայ է, ամէն օր նոր նոր հեղինակներ, խմբագիրներ թարգմանիչներ, նոր հրատարակութիւններ, լրագիրներ մասնադրութիւններ, վիպասանութիւններ, բանաստեղծութիւններ, փայլուն գրիչներ մէկզմէկու ետեւէ կը հասնին :

Ասոնց ամենուն համարները եթէ հաշուենք, դրագիտաց խոչոր խուճիւրդ կը կազմեն. ազգային թափաչըջիկները գրասեղաններուն գլուխը կրնային տնկել, ազգին լեզուն կրնային բարւոքել :

— Ինչո՞ւ կեցեր կը նային, թեւերնուն բռնող չկա՞յ եւ, ի՞նչ պիտի ընեն նէ՞ թող ընեն մենք ալ վայելե՞նք :

— Ասոնք իրաւ շատ բան կրնան ընել՝ եւ կ'ընեն ալ բայց բան մը կայ օր մէջքերնին կը կոտրէ կոր :

— Ի՞նչ է ասոնց մէջքը կոտրողը :

— Ի՞նչ պիտի ըլլայ, տարին 12 ամիս կ'աշխատին, քրտիք կը թափեն, հեւք կը յոգնեցնեն, սրտերնին կը մաշեցնեն, ասոնց ետեւէն սպաղարական ահազին ծախքին տակ կը մտնեն, մէկ մասը կը վճարեն եւ մնացածն ալ ծախուած ատեն կուտանք կ'ըսեն : Թղթափաճառին ուրիշ մասալ մը կը կարգան, կազմարարին ալ երաշ-

խառնոր մը կուտան , ինչ եւ իցէ , ցաւօք եւ հեծութեամբ
զիրքը իւրայ կ'ընծայեն :

Ետքը :

— Դիրքերը գրավաճառներուն խանութները կը բաժ-
նուին , հրատարակին սլ տաղին անդին կ'իյնայ , թեւալ-
ներուն կ'երթայ՝ թեւալութուր ընել կուտայ , եկեղեցիներ-
ուն եւ աւագերէցներուն ծանուցում ընել կուտայ ,
խմրագրաց ձեռքը ոտքը կ'իյնայ , գովեստներ գրել տա-
լով , չաղչաղալը իւրոններ ընել կուտայ , վերջապէս սո-
ղին անդին կը վազէ հոգին բերանը կուգայ :

Վրան չարաթ մը կ'անցնի , կ'երթայ գրավաճառին
խանութը :

— Ի՞նչպէս էք , զիրքս հարցնող եղա՞ւ :

— Ձէ , տահա չիմախիք հարցնող փնտռող չեղաւ :

— Անկից կ'ելլէ ուրիշ գրավաճառի մը կ'երթայ :

— Մեր զիրքերը ի՞նչ եղան :

— Ինչպէս որ ձգեցիք անանկ կեցած :

— Տէր Աստուած , սա ի՞նչ խայտառակութիւն
այսչափ լրագիրներու մէջ գրել տամ , թէլիսինքն իմ
տամ , ժամերը ծանուցում ընել տամ , առաջին օրը
կամ այսչափ համարաւ ունենամ տակաւին
չծախուի . շատ բան :

Հոնկէց կը բամբուի խղով մը ուրիշ գրավաճառի
խանութը կ'երթայ :

— Դուք ի՞նչ բրիք բարեկամ :

— Կիւնդէլա մէկ հատ մը սիֆիթահ՝ ըրինք :

— Ինտո՞ր մարդ էր առնողը :

— Սա տիրացու Աստուծոյ :

— Փառք Աստուծոյ , հէլէ մէկ հատ մը ծախուիլը
խմացանք :

Ուրիշ գրատուն մը կ'երթայ չ'է ծախուեր , Սուճի
Պողոս աղային կերթայ՝ նոյնպէս չ'է ծախուեր , Պաղտատ-
լեան գրատան առջեւէն կ'անցնի գրավաճառը զինքը ներս
կը կանչէ :

— Աղբար , սա գիրքերդ հոստեղէն վերցուր , ոչ
հարցնող կայ ոչ փնտռող , իմ տեղս ալ նեղ է՝ զնկու
տեղ չունիմ , սանկ մէկ երկու հատ կուգեսնէ ձգէ պէլքի
հարցնող մ'ըլլայ :

— Հիմա բարկութենէս պիտի ճաթիմ , տուած ոչ-
խառութիւնս մի մեղքնամ , չէ՛նէ մի խարճած ստակ-
ներս , սա ինչ անզգայ անտարբեր մարդկութեան մէջ ենք
մնացեր , հիմայ ես սա գիրքերը առնեմ ի՞նչ ընեմ . մի-
սի վրայ ձգեմ ըսեմ չուտուիր , օխայսլ ծախեմ ըսեմ
առնող չըլլար :

Մարդը յուսահատած կը մեկնի :

Ճամբան տպագրիչը դէմը կ'ելլէ :

— Աղբար , ո՞ւր է սա մեր հաշիւը , ասա՞նկ էր
քու խոստմունքդ , գրքերս ծախու ելածին պէս պիտի
վճարեմ քոյք , վրան այսչափ օր անցաւ՝ դեռ մէկ ստակ
մը տուած չունիք :

— Անհոգ եղիք , ես ձեր մէկ ստակը չիմ ուտեր ,
գրավաճառներուն քովէն հաշիւս չեմ ուզեր կոր ուր ,
ամէնքը մէկանց առնեմ եւ ձեր հաշիւը ամբողջովին
մաքրեմ :

— Ես գրավաճառ մրավաճառ չեմ հասկընար , մենք

գործաւոր մարդիկ ենք , աշխատութիւնս առուեր ենք ,
ստակինս ժամանակին կուգենք :

— Մինչեւ չարաթ ինչ կ'ընեմ չեմ ընեմ՝ ձեր հա-
շիւը կը մաքրեմ :

— Պարոն , թէ որ չարաթ օրը չը վճարէք՝ գիտցած
ըլլաք որ վերջը խայտառակութեան պիտի ելնեմ :

Հաղիւ թէ տպագրիչին ձեռքէն օձիքը կ'ազատէ ,
թղթավաճառը գէմը կ'ենէ : Քանի մը սուտ գլտորելով
զանի ալ կը համոզէ , քիչ մը առաջ կ'երթայ , կաղմա-
րարն թեւէն կը բռնէ , այս վերջինը բաւական կուեղէ
եւ խել մը անպատիւ խօսքեր ընելէ ետքը՝ քանի մը
դուրուշ վճարելով հաղիւ հազ ձեռքէն կ'ազատի , եւ
ինքզինքը տուն կը նետէ :

Մտղը գրակահութեան մէջ բերնին համր առնելով՝
չէ թէ մէյ մ'ալ տպագրէզի վրայ երեւնալ , այլ տունէն
անգամ դուրս չ'ելլեր :

ԽԱՐԲԵՐԴԷՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիացի Մըսղըր Մելարա , որ երկու չարաթէ
ի վեր հոս կը գտնուէր այսօր ճամբայ ելաւ այցելելու
գաւառիս քանի մը նահանգները :

— Նորեկ գերման վարժաւորներն ու վարժապետ-
ներն մեծ փոյթ կը տանին անոք-լաճերուն գերմանե-
րէն սովորեցունելու :

— Մօտերս Ամերիկայէն Եփ. Գօլէճի համար բրօ-
ֆէսօր մ' եկաւ (Մըսղըր Հինկթիսկթընկ) Անգլիերէն
ճիւղի գասախօսութեանց համար :

— Խուլա վանքի մանկանոցի չէնքը կստուցուեր
լմնցիր է , բայց մէջը քանի՞ անոք մանուկներ կան :

— Հոս , ցորեն , փայտ եւ միս միշտ անհաշտ են ,
իրարու նայելով քանի կերթայ հրապարակաց վրայ «Շատ
աժան է» խօսքն է որ կը լսուի գոհունակութեամբ :

— Անգամ մը հարցուցէք թէ Խարբերդի գիւղերէն
քանի՞ն վարժապետն եւ վարժապետ ունին :

— Առ այժմ Խարբերդէն Ամերիկա գաղթողներ
չկան :

— Խարբերդի մէջ այլ եւ այլ տեղեր 500 էն սուելի
անոք մանչ ու աղջիկ կը խնամուին :

ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

Վերջնային մէջ հարուստ մարդոց խմբակ մը ընկերութիւն մը կազմած է որուն գլխաւոր նպատակն է՝ ազնկանց հետ ամուսնութիւնը քաջալերել։ Այդ ընկերութեան ո եւ է մէկ անդամը եթէ հարուստ ազնկան մը հետ ամուսնանայ, ընկերութեան անուակիրն 6000 ֆիւրին պիտի վճարէ իբր տուգանք։ Այդ գումարը կարօտ նշանածներու պիտի յատկացուի։

Չարաճճիին մէկը կիւսայնէ մեզ թէ մինչեւ ցարդ վճարուած տուգանքներուն գումարը քանի մը հարիւր հազար ֆիւրին կը հասնի։

* * *

Չինաստանի կայսրը իւր զօրքերուն ամսական 24 ական զրուշ (մօտաւորապէս) կը վճարէ։ Այդ գումարէն Չինացի զօրքը իւր անունը կը գնէ։

* * *

Գերմանացի մասնագէտ-ակնաբոյժներ հաստատոյ են թէ կապոյտ գոյնով գծուած թուղթերուն գործածութիւնը վնասակար է եղբր աչքերու։ Գերմանիոյ վարժարաններուն մեծ մասը հիմա սեւ գոյնով գծուած թուղթեր կը գործածեն։

Ուսումն. Խորհրդոյ Աստուպետ էֆէնտին ի՞նչ կարծիք ունի այս մասին։

* * *

Վերջերս հրատարակուած պաշտօնական վիճակագրութիւնէ մը կը տեսնենք որ Մեծն Բրիտանիոյ առեւտրական նաւատորմիդին ընդհանուր տարողութեան չափն է 9,000,000 թօնօ։ Եթէ ասոնց վրայ աւելցնենք Բրիտանական գաղթականութեանց նաւերը, մօտաւորապէս 11,000,000 թօնօ կունենանք։ Գերմանիա, որ միւս ազգաց մէջ առաջին տեղը կը բռնէ, իբրեւ առեւտրական երկիր, հազիւ մէկ ու կէս միլիօն թօնօ տարողութեամբ նաւային ոյժ մ'ունի։ Գաղիա՝ մէկ միլիօն թօնօ։ Ռուսիա, Իտալիա, Սպանիա, Աւստրիա եւ Միացեալ Նահանգք շատ վար են։

Այսպէս ալ այդ պաշտօնական վիճակագրութիւնը վաճառականութեան արժէքը հետեւեալ կերպով կը բաղդատէ։

Մեծն Բրիտանիա եւ իւր գաղթականութիւնը, ներածմունք եւ արտածմունք 1022 միլիօն Անգլ. ոսկի, Գերմանիա՝ 400 միլիօն, Միացեալ Նահանգք 322 միլիօն, Գաղիա 264 միլիօն Անգլ. ոսկի։ Միւս երկիրներու համար արուած գումարները 9 թուանշանի չեն հասնիր։

«Եւ դեռ կան յոռետեսներ որ Գերմանիա՝ Անգլիոյ վաճառականութեան կապառնայ կ'ըսեն» կ'աւելցնէ այդ պաշտօնական վիճակագրութիւնը։

* * *

Իգախան սեռը ի Չինաստան. — Չինաստանի մէջ կանայք, ըստ Պուտայական կրօնքին, իրենց ամուսնաներուն գերիներն են։ Կնոջ գիրքը այն աստիճան ցած եւ ստորին է որ Չինացի մայր մը միշտ կ'ազօթէ որ աղջիկ զաւակ չունենայ։ Աղջիկ զաւակ մը ծնունդը ամբողջ ընտանիքի մը խորին տրամութեան պատճառ կ'ըլլայ, եւ յաճախ այդ գմբախտ աղջիկ երախտն կ'անյայտացուի եւ տեղը մանչ մը կ'առնուի, իբր հոգեզուակ։ Աղջիկ զաւակ մը սպանութիւնը Չինաստանի մէջ առանց պատիի կը մնայ։ Քանթոնի մէջ Կաթոլիկ կղերական մը որքանոց մը հաստատած է որուն մէջ մէկ մանչ մը չկար Մայրեր իրենց նորածին աղջիկները հոն կը տանին ու զրան սանդուղներուն վրայ կը ձգեն։

Ֆու-Չեուի մէջ Եուէն-Ֆու-Գետին եգերքը գրուած բարձր տախտակի մը վրայ հետեւեալ ազգարարութիւնը կայ։

Էդ ռդաֆներ մի խեղդիք հոս։

750000 Գու-Չեուցիք կը կարգան այդ ազգարարութիւնը եւ ոչ մին կը կարմրի։ Ինչո՞ւ։ Որովհետեւ բոլոր կռապաշտ երկիրներու մէջ կրնորը եւ աղջիկները ամենաստորին դիրք մը կը գրաւեն։ Չինացիին մանչ աղան կը յաջողէ իր հօրը եւ անոր բոլոր ստացուածքը կը մաւաճագէ։

Չինաստանի մէջ օրէնքը այնպէս կը արամադրէ որ մայր մը պարտաւոր է իր երիցագոյն տղուն (մանչ) հնազանդիլ, Չինացի հայր մը արտօնեալ է անհնազանդութեան պատճառաւ իւր տղան սպաննելու ինչ որ յաճախ կը պատահի, եւ օրէնքը երբեք չպատժեր զինքը։ Եթէ աղայ մը իւր հօրը զարնէ եւ հայրը զայն չսպաննէ, տեղական իշխանութիւնք աղան հօրը ձեռքէն առնելով սոսկալի տանջանքներով կսպաննեն։ Բայց եթէ աղայ մը իւր մայրը ծեծէ, հայրը տեսակ մը հպարտութեամբ կը դիտէ տղուն այդ սոսկալի արարքը։

«Փառք քեզ Աստուած որ մեզի Չինացի չես ստեղծեր» կ'ըսեն անշուշտ մեր «փափուկ, տկար կամ գեղեցիկ» սեռի արարածները։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Ուսուցիչը. — Ի՞նչ ըսել է «հոմանիշ բառ»։

Աշակերտը. — «Հոմանիշ բառ» անոր կ'ըսեն որ կը գործածուի ուրիշ բառի մը տեղ, երբ այդ ուրիշ բառը ինչպէս գրուիլը չենք գիտեր։

* * *

Եթէ հաշուենք թէ մարդիկ իրենց կարծածին չափ մեծ ըլլային այն ատեն ամբողջ Պոլսոյ մէջ հազիւ տեղ պիտի ըլլար 2 բժշկի, 3 փաստարանի, 1 ուսուցչի, 1 վաճառականի եւ 1 խմբագրի համար։

* * *

Կինը. — Ի՞նչ համարձակութեամբ զիս յանդիմանեցիր տիկին Ք. Ներկայութեան :

Էրիկը. — Է՛հ, գիտես եւ, միշտակ մնամք նէ չկրնալ ընելս գիտես :

* * *

Տիկին Ջ. — Շատ անգամ կը խորհիմ ինքնիրենս թէ Անգլիացիք իրարու հետ խօսին նէ զիրար ինչպէս կը հասկնան :

Տիկին Ք. — Շատ զարմանալի ես :

Տիկին Ջ. — Բայց կ'աղաչեմ, երկու աղջիկներս Անգլիներէն կը խօսին իրարու հետ եւ զիրար չեն հասկընար :

ՆԿԱՐՆԵՐ

Առեւտրական գործերնին ձախորդութեան մատնուած վաճառականները այս տարուան պիլանչօնին գալ տարուան պիտի ձգեն, որպէս զի կամ վնասնին գոցեն եւ կամ մաղազանին :

* * *

Անցեալ տարի ամէն գործի չի հաւնելով պարսպ պըտըտող երիտասարդները այս տարի ալ շատ չնորհքով գործ մը գտնելու յոյսերնին կտրելու են :

* * *

Կազանդէքներու սպասողները բերաննին հոգի բանալու են : Այս սպասողին մօտանց անցած է, թողունք որ էքօնօմի փօլիթիքի ալ գէտ է :

ՄԵՐ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

Լ. Ռ. — Գաղիայ հանրապետութեան նախագահին տարեկան ուժիկն է 600,000 ֆրանք, եւ այդչափ գումար մ'ալ կ'ընդունի զանազան ծախքերու համար :

* * *

Անգլիացիք եւ Գերմանացիք՝ վիճաբանութիւն մը ունեցած են իրենց մէջ սա խնդրոյն վրայ, «Ծննդեան ծառը» (Christmas tree) նախ Անգլիոյ՝ թէ Գերմանիոյ մէջ ծագում առած սովորութիւն մ'է : — Ոչ միայն եւ ոչ ալ միւսին մէջ : Այդ սովորութիւնը Քրիստոսի թուականէն շատ առաջ կար հին Եգիպտացոց առնել : Անշուշտ «ծննդեան ծառ» անունը չէր տրուեր այն առնել : Արմաւենիները ամէն ամիս նոր ձիւղ մը դուրս կուտան, Եգիպտացիք տարեկան ամբողջ ծառը, իւր 12 ձիւղերով, իրենց սունը բերելով տարեկան իւր ամէնին, իբրեւ նշան տարւոյն աւարտման : Շատ հաւանական է սակայն որ Անգլիացիք՝ Գերմաններէն առաջ «ծննդեան ծառ» սովորութիւնը ընդունած ըլլան :

* * *

Ամերիկեան ճաշակ ունեցող մը կը գրէ մեզ. — Վերջերս օտար թերթի մը մէջ կարդացի որ Ս Բեդերսպուրկի մէջ խմբավոր մը իւր թերթը սիկաուի թուղթի վրայ կը տպէ, որով ընթերցողը իւր գործը լմնցնելէ վերջ օգտակար կերպով կրնայ գործածել թերթը : Ինչք ինչո՞ւ չէք ընելը : — Ձեր առաջարկին համար մեր շնորհակալութիւնը յայտնելով հանդերձ կը մերժենք զայն հետեւեալ պատճառներով : Նախ՝ չենք ուզեր որ մեր գրութիւններն մօխի ըլլան : Երկրորդ՝ Ծաղիկի՝ խնդալ եւ հետաքրքրութիւն, ինչպէս նաեւ օգտակար լուրեր սիրողներու համար ընտիր հաւաքածոյ մը կրնայ ըլլալ : Եւ արդէն բաւական խնդրանք կայ Ծաղիկի ներկայ Նոր Շրջանի 15 մինչեւ 24 թիւերուն համար :

* * *

«Ամերիկեան ճաշակ ունեցող մը»էն շատ աւելի աղւոր եւ նուրբ ճաշակ ունեցող բաժանորդ մը որ «Համակիր Ծաղիկի»-ի կատարագրէ, կ'ըսէ թէ Ծաղիկի 8 խոշոր եւ բնաները զինքը չեն կշառցներ, եւ կը խնդրէ որ թերթը փոխանակ 8 ի, 16 երեսներով հրատարակենք : — Գոհ եւ ուրախ ենք որ համ կ'առնէք մեր թերթէն եւ արդէն մօտ ապագայի մը մէջ մտադիր ենք ձեր առաջարկածը (որ մեզ համար նոր բան մը չէր) ի գործ դնելու :

ԲԺՇԿԻՆ ԷՄԵՅԷԹ ԶԸՆՈՂ ՄԱՐԴԸ

Կան մարդիկ որ բժշկի ստակ տալը խենդութիւն կը համարին, եւ բժշկի տալիք ստակը կախարհներուն եւ բախլա նետող կնիկներուն կուտան :

Այս կարգի մարդոց մէկուն կինը ծանր հիւանդ պառկած ըլլալով, հիւանդոտեա եկող ազգականներն ու ծանօթները կը յորպորեն այրը որ բժիշկ մը բերել տայ :

— Պէ՛ ճանրմ կը պատասխանէ, աս բժիշկը Աստուած չէ եւ որ հոգի տայ հիւանդին :

— Հիւանդին հոգի չտար ալ նէ արդէն ունեցած հոգին մարմինէն չբաժնելու կոշխատի :

— Օղար հէփսի պոչ սէօզլէր, պէնիմ գաֆամա կիրմէզ, ճակտին գիրը ինչ է նէ ան պիտի ըլլայ :

— Քա վույ, աս ի՞նչ դաշի՞մ էրիկ է, զահէր մէյ մ'ալ կարուելու համար կնկանը մեռնելը կուզէ կոր, կ'ըսեն ներկայ եղող մէկ քանի կիներ :

— Քա ճանրմ, կը պրտայ անդիէն հիւանդ կինն ալ, էյէր ատանկ արդու մը ունիս նէ զիս տէօչէկներուն մէջ ատանկ օլուն օլուն բերել տալուդ զէհիլլէմիշ բրէ լմնցուր, հէմ ես ալ սահաթ մը տալ կը խալսիմ սա տանջանքէն, հէմ գուն ալ մուրափող կը հանիս :

— Քա կնիկ, ես ատանկ մէրամ ունենամ նէ քու մեռնելուդ ինչո՞ւ սպասեմ, օղլաթեանդ տունեմ նէ ի՞նչ կ'ըլլայ եզեր, կնիկը ողջ ի՞քէն ուրիշ կնիկ մ'ալ ամուգնել չկա՞ն մի :

— Հապա ինծի համար սաա՞կը խնայելուդ է որ բժիշկ չես բերել կոր :

— Քու լիցի :

— Ձահէր զիս կը նախանձիս բժիշկէն անոր համար ցցունել չես ուզեր կոր :

— Տէր ողորմիս :

— Անանկ է նէ աղէկնալուս յոյս չունիս անոր համար բժշկի չես ցցուներ կոր :

— Աստուած չընէ :

— Էյ չէ նէ իմ պառկելովս դուն ալ բանաթ ըլլաս մօտիս թրային փարա տալէն ազատիս , փառք Աստուծոյ երկու տարի է քի մէկ պատմա ֆիստանով եմ :

— Նայէ ի՞նչ խօսքեր կ'ընես :

— Էյ հապա ի՞նչ է պատճառը :

— Ճանճմ , ես տէտէէս , պապաէս անանկ վասիյէթ ունիմ որ մեր տունը հէքիմ ոտք չպիտի կոխէ , մեր սինսիլէն ասանկ եկած է , ասանկ կ'երթայ :

Ասոր վրայ հիւանդին եղբայրը կուգայ հիւանդը կը վերցնէ իր տունը կը տանի , բժիշկ բերել կուտայ եւ կ'աղէկնայ , բայց մինչեւ ցայսօր իր էրիկը կ'սպասէ եւ զեր որ կինը տուն գայ , բայց գալիք ալ չունի :

Սպասէ նայինք :

ԿԱՂԱՆԴԸ ԿՈՒԳԱՅ ԿՈՐ

Նախ ապարաստութիւններ տուներու մէջ տմնուրեք , մեծ ու պղտիկ ամէնքն ալ գործի վրայ են , ալ կընկալութիւններ որ ըսես՝ ալ չափ չունի :

Ազմատէ այս առթիւ բերած է մեզ տեղեկութիւններ զորս ի գիր կ'առնուիք իւր սղագրութիւնէն :

ԳՈՐԸ ԳԱՐՈՒԻ ԱՅԶ

Քա մարդ աս տոպրակները առ :

— Այսչափ տոպրակը ի՞նչ պիտի ընեմ :

— Մեղայ , վայ մեղքիս , եկածը կաղանդ է , չօճու խի օյունճախ է զահեր , երկու օխայ ցորեն , հինգ օխայ չէքէր , օխայ մը պատէմ , կէս օխայ նշաստայ , տառ տիր հէմ զաֆրան , թարչին , քիչնիչ , ֆրսարիս , մեղայ , ասոնք չըլլայ նէ կ'ըլլայ , Էոոցայ նայէ , թայինին խալանոցը անպարին վրայ զրեր եմ , չմոռնաս հա :

Մարդը եղևութիւնը զրպանին կը հասկցնէ կը նայի որ ընաւ անտեղուանքը չէ , գլուխը կը կախէ . — Ձէ , չեմ մոռնար ըսելով դուրս կ'երնէ :

Շուայլ կնիկ ունեցողին Աստուած կարողութիւն ստայ :

Ոսկերիչներն ու մալիֆաթուրաճիները աստուծոյ կանուխ խանութին կը վազեն եւ կը պատրաստուին նոր փեսայ մը կամ նշանած մը որսալու , ալ նոր հարսերուն եւ նշանածուհիներուն պատրաստութիւնները մի' տեսնեն :

— Քա զիտես , իմինս ինծի միտալեօն մը պիտի առնէ :

— Իմ նշանածս ալ աղամաղեայ մասնի ասպարեր է :

Մինչդեռ անդին իսկծէրը կը մտածեն որ կրնա :

արդեօք պօն մարչէի շինծու զարդերով այն օրն անցընել :

Այսպէս պատրաստութիւն եւ մտածմունք այս շաբաթ սաստիկ մենամարտութեան մը բռնուած են :

Բերայի մեջ

Հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցած է Բերայի Ֆէրիտիյէ թաղին մէջ զոր դարձեալ Ազմատէ հաղորդած է մեզ :

(Ռոքոս աղային տիկինը՝ Պիրիճիկ տուտու՝ առջի իրիկունէ պատրաստած կաղանդական մէկ ցուցակը առաւօտուն ներկայացուց Ռոքոս աղային ամենայն լրջութեամբ :

— Պու նէ տիր Պիրիճիք տուտու :

— Երկաշնա լազըմ օլանլարը սըրասը իլէ եազտըմ պիր իսթա եաքտըմ քի գօլայլը օլսուն տէյի :

— Էյի ամա օ դատար ուզուն եաբըլսըն քի գօլայլը եէրինէ բէք չօք կիւճիլը օլաճաք կիպի կէլիօր պանա :

— Պէն իստէրիմ քի հէր շէյ բուսուժունտա , սըրասընտա օլսուն :

— Կէօլլիկիւմ իստիւմտէ տէյիլ , օգու պազալըմ նէյիլի շու լազըմ օլանլար :

— Իլքին եէմիլ թագրմընտան պաշլայալըմ , էլմա , արմուտ , այվա պէչէր օքկայ ,

— Էթաի ճէման օն պէչ օքկայ , էյ :

— Պատէմ , խուրմա , ինճիւր , գալրուժուշ ֆընսըք , իւչեր օքկայ :

— Օն իքի տահա էթաի եիրմի եէաի օքկայ :

— Գայըսը , ճէվիզլի սուճուք , ճէվիզ , էպէպի , իւքիչէր օքկայ :

— Պիրիճիք տուտու , պազըյօրըմ քի զայէթ մահիր պիր մանալ օլապիլէճէքսին :

— Նէտէն :

— Պու նէ՞ դատար եէմիլ իսմի պիլիօրսուն :

— Տահա՝ բէստիլ տիր , քէօֆթէ տիր , իյտէ տիր , բէք չօք եէմիլ իսմի պիլիօրիմ ամա , պարիթ օլմուշ տուր սուֆրանա չըղարմաղարտա օնուն իշին լիսթայա եազմատըմ :

— Օնա պապարսան , իլք սէօլլէտիլին եէմիլէրին տէ մօտասը կէչմիլ տիր , պու սէնէնին սօն կաղընտ մօտասը էլլի թանէ բօրթուգալ տըր , հէմ սագանա պէքճիլէ պիրէր թանէ վէրիսին : Պէն լիսթանըն օ բարչասընը չըղ , պէն ալընաճաք մէյվէլէրի ալըրըմ :

— Աման գուզում Ռօքոս աղա բուսուժմըղ պիր շէյ օլմասըն :

— Սէն լիսթանը օգու , վազթըմ եօգ ստաթ պէչէ կէլիօր չարչըյա կիտէճէլիմ :

— Չօճու զլարըն , պէնիմ , ֆիսթան տըր , պօթին տիր , օնլարտան պաշլայըմ :

— Աման օ բարչայը կէչ շիմաի հիչ վազթը տէյիլ :

— Անուշապուր թագրմընտ լազըմ օլանլարը պաշլայըմ :

— Օնլարտա տահա վազթըմըղ վար , օնուտա կէչ :

— Եհնի պիր սօֆրա թաղըմը լաղըմ, իստէրսէն օ-
նու օգուեայրմ:

— Կէլէճէք հաֆթա տօղրու եօլտա պիր տի քեան
լիքիաասիօն էտէճէք, օնու օ վաղըթ օգուեսուն:

— Չօճուգլարա չամաչր թաղըմը լաղըմ, պարէ
օնլարը օգուեուտա պիր սաաթ իլէրի ալընօրն:

— Սէն պիր դաչ կիւն սաալը կթ կէօմրիւքտէ մալ
մէզաթ օլաճադ, օնու օնտան ալըրըզ:

— Գա ճանըմ կէլէն երլ պաշը ալըր, կիւն իլէրի
պունլարն չարէսինէ պազմալը:

— Պիզաէ պազմալըմ աէյօ՞մուլըզ, սէն օգու
պազալըմ պաշկա նէ վար:

— Պիթաի, արթըք լիթաաա պիր չէյ պալմաալ:

— Պիթաի մի, օ՛հ, հէլէ չիւքիւր եարապպի, պու
սէնէյի տէ հաֆիֆէ կէչիրաիք, ատիօ նօնօմ:

— Շիմաի պիր գարար վէրմէտիք նէ:

— Նասըլ գարար վէրմէտիք, չըզտըզն շէյլէրաէն
պաշկա նէ գալալ իսէ լիթաաա ալընաճալ:

— Լիթանըն չըզլմաալըք եէրի գալմաալ քի:

— Էօյէ իսէ վազ կէչ սէն օ լիթաաան ըսելով,
մեծ դժուարութեամբ կրցաւ ինքզինք դուրս ձգել:

Գանք սիրահարներուն:

Այս թշուառական սիրահարները ամենէն բարեբաղդ-
ներն են, իրենց խեղճ սիրուելիներուն այնպէս հասկցու-
ցած ըլլալով որ սիրահարութեան մէջ սիրոյ տոմսակ մը
նուէրներու ամենաթանկագինն է, կը խորհին թէ ի՞նչ
պէս կրնան հրապուրել եւ չօրքօրթ լեզու մը բանեցը-
նել:

Հետեւեալը անխոհմ սիրահարաց մէկուն շարա-
դրածն ըլլալով, գիպուածաւ Ազմօտէի ձեռքը անցնելով
մեր դրասենեակը բերած է, զոր ահա առանց բառ մը
փոխելու կը հրատարակեմք:

Առաջին նամակին վրայ Գաղիբէն հետեւեալը
գրուած էր:

Ասօռապը մա թոէչէն մատմաղէ Ագապի:

Կռան վիթէս Ռիւ վէնէտիկ * * *

Մատմաղէ Ագապի:

Եհնի սէնէյի թէպրիք էտէրէք սանա օլան սէճէրէլի
մուհապպէթիմին պիր գաթ տաճա եէնիլէնտիղինի խա-
պէր վէրիւրմ: Ալլան նիչէ սէնէլէրէ եէթիչտիրսին,
տայիմ պէօլլէ կիւնլէրէ եէթիչէլիմ, սանա սուլընիո
էթմէք իչիւն իւթիւ սիյան մինէ իլէ եպիտուս ետղըլը
պիր եիւզիւք ալաճաղըմ, էյէր չօրպաճըմ այլըլըմ պիր
թամամ վէրիւրմ: Եօզ կէնէ էօյլէ կէչէն սէնէ կիպի եա-
րըմ այլըզ վէրիւրմէ քէնաիմէ եէթիլմէզ, լաստիյիմ փաթ-
լաստ, պիր թանէ ալաճաղըմ, էքմէքճինին չէթէլէսինի
սիլէճէյիմ, տամլա քէօմիւրիւմիւզ եօզ 20 օզգա օլաուն
ալաճաղըմ, վէ սայիրէ վէ սայիրէ:

Ղայէթ մուհապպէթի

ժամ

(Շարունակելի)

ԵՐԱԽԱՆԵՐԸ

Մարդուս ապրուստի միջոցները քանի որ քիչնան,
այնքան ալ ծախքի դռները կարծես չափէն աւելի կը
բացուին կոր:

Մարդուն մէկը անցեալ դիչեր մտահոգ տունը նստած
միջոցին, որ ատեն իւր կինն ալ աղաքերքի ցաւով կը
տանջուէր. յանկարծ գայեկը վրան կը վազէ եւ միւստէ
միւստէ պոռալով կ'իմացնէ մանչ զաւկի մը ծնունդը:

Մարդը կնոջը անմտանգ ազատելուն վրայ զգացած
ուրախութենէն յետոյ, կ'սկսի հետեւեալ օրուան ընելի-
քը մտածել, երբ գայեկը դարձեալ ներս մտնելով երկ-
րորդ մանչ զաւկի մը ծնունդը կ'իմացնէ:

Մարդը իւր ակնկալութենէն դուրս ուրիշի մընալ
զալուստը լսելուն պէս, կ'սկսի մտմտութիւն առնել ու
լսածին ստուգութեանը վրայ պահ մը կ'ամրապնդէ, որ ա-
տեն երրորդ անգամ ըլլալով գայեկը ներս կը մտնէ եւ
աղջիկ զաւկի մը ծնունդը կ'իմացնէ:

Մարդը այս երրորդ լուրին վրայ բոլորովին շուար-
եալ տեղէն ցաթիկիւն պէս շիտակ կնոջը սենեակը կը
վազէ, եւ կը տեսնէ որ երեքը քով քովի պառկած միա-
բերան ընկղայ ընկղայ կ'երգեն. բարկութենէն կ'սկսի
սենեկին մօմերը մէկիկ մէկիկ մարել:

— Քալէ նէ՞ ետիարսինիզ, Ակոբճան աղա, ազլինի-
ղա մը կէլաի քայմէնի, կ'ըսէ գայեկը:

— Ազլընա կէլմէք տէ սէօ՞ղ մի, պունլարը իւշիւ
պիրտէն պէսլէմէք գօլա՞յ մը ալըր, հէլպէթ մօմլարը
սէօնաիւրիւօրըմ քի պարէ կէօզիւմ կէօրմէսին կ'ըսէ,
ու տունէն կ'առնէ կը քալէ:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատրիարքարանի կողմէ Կայս. Կառավարութեան
մատուցուած խնդիրներէ մին է Օամ. երկրաց մէջ գրա-
նուած Ազգ. վարժարանները պաշտօնական արտօնագրի
ենթարկուելը: Այս մասին բաւական ժամանակէ ի վեր
բանակցութիւնք կը կատարուէին: Արդ՝ Մէարիֆի կողմէ
եղած հրաւերի մը վրայ, Պատրիարքարանի գործակատար
Տէր-Ներսէսեան Տիգրան էֆ. եւ Թուրքիէնի թղթակ-
ցութեանց ակտուչ Խաչատուրեան Կարապետ էֆ. նոյն
պաշտօնատունը գացին եւ այդ մասին բանակցեցան
ձեռնապա պաշտօնէից հետ: Կատարուած խորհրդակցու-
թեանց հետեւանօք, ինչոքիւր կարգադրուեցաւ վաղեմի
առանձնաշնորհմանց հիմերուն վրայ, այնպիսի եղանակաւ
մը որ տրուած օրոշմանց կանոնաւոր կիրառումը կ'երաշ-
խաւորէ: Տէր-Ներսէսեան ու խաչատուրեան էֆէնտիք
այս կարգադրութիւնը պիտի մատուցանեն Ս. Պատրիարք
Հօր:

— Ս. Պատրիարք Հայրը կիրակի օրը Կէտիկ-Փաշայի
թաղի աղքատաց համար նուէր մը ձգեց թաղ. Խորշըր-
դոյն Նոյնպէս թաղին Ս. Մեարովպեան երկսեռ վարժա-
րանաց աշակերտաց համար շաքար բաշխել տուաւ:

— Երուսաղեմայ Պատր. Փոխանորդ Տ. Գէորգ Մ.

Վ. Երէցեան, Ս. Պատրիարք Հօր հրամանաւ օրհնութիւններն տոնէ յետոյ, զէպ էջմիածին մեկնեցաւ մայրաքաղաքէն Ֆրանսական շոգհնաւով:

— Հիւանդանոցի Հոգաբարձութեան համար նորոգ կազմուած Վարչական Խնամակալութիւնը Մեծ Նոր խանի գրասենեկին մէջ ի նիստ գումարուելով, Ատենապետ ընտրած է՝ Էլիաս Էֆ. Չալեան, եւ Ատենադպիր՝ Կարապետ Էֆ. Քիւրքճիխանեան:

— Ս. Պատրիարք Հայրն 100 ոսկիի չափ նպաստ մը խրկեց, բաժնելով Քլիի, Երիզրի եւ Ալիփանի կարօտելոց:

— Ի նպաստ կարօտելոց, Պիլէճիկի վիճակէն եւս Ս. Պատրիարք Հօր եկաւ երէկ 2,885 զրշ. յորմէ 2500ը Մուրաշայցիք, 260 ն Ասարրիսիք եւ 125 ն Եէնիգիւղցիք հանգսնակած են իրենց նէջ:

— Անցեալ Կիրակի Հայ. Հռովմէական ազգայնոց ընդհանուր ժողովը մասնակցութեամբ երեւելեաց, Պատ. Կաթողիկոսական փոխանորդի ընտրութեան առաջին քուէարկութիւնը կատարեց: Քուէից մեծամասնութիւնը վիճակեցաւ Արհիպագառի Տ. Աւետիս Եպիսկ. Արքիտրեանի, Առաջնորդ Խարբեղի, որ այժմ Պոլիս կը գրաւուի: Այս արգիւնքը ցոյց կուտայ թէ վերջնական ընտրելին է Արքիտրեան Եպիսկոպոս, եւ կը փութանք շնորհաւորեալ այսքան քաջայարմար ընտրութիւն մը: Աւետիս Եպիսկոպոս է բնիկ Ակնցի, նշանաւոր գերբաւասան է, եւ թէպէտ երիտասարդ, սոնի փորձառութիւն եւ զանազան լեզուաց հմտութիւն:

— Հ. Արսէն Արքիպիսկ. Այսրենեան, մեծաւոր վիճնայի Միթրաքեանց ուխտին, սնցեալ Գշ. պատիւ ունեցիր է ճաշելու Վիլէնայի Հոֆպոլի Կայսերական պալատան մէջ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Յատուցիկայ Կիւրակէ, 28 Դեկտ. Օգոստափառ Սուլթանին ծննդեան տարեդարձն ըլլալով, նոյն օրն հանդիսաւոր բարեմաղթութիւնք տեղի պիտի ունենան Մայր Եկեղեցւոյ մէջ՝ փառն արեւշատութեան եւ թանկագին կենաց Նորին Կ. Վեհափառութեան: Ուստի կը հրաւիրուին մայրաքաղաքիս Ս. Եկեղեցեաց քարոզիչք եւ քահանայք, ազգային աստիճանաւորք եւ Ընդհ. ու Վարչական Ժողովոց եւ Տեսուչ ու Թաղ. Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց անդամք, նոյն օրն առաւօտեան ժամ 6 ին ներկայ գտնուիլ ի պատրիարքարանս, իբրեւ հրաւիրադիր նկատելով ներկայ Յայտարարութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ'ըսուի թէ Անգղ. կառավարութիւնը նախարարական վերջին գումարման մէջ կարեւոր որոշումներ ըրած է նկատմամբ այն քաղաքականութեան, որու պիտի հետեւի Մայրազոյն Արեւելքի մէջ: Այդ խնդրոց վրայ նոր հրահանգներ ղրկուեցան Ուաշինկթընի, Փեքինի, եւ Թոքիոյի Անգղ. դեսպաններուն:

Անգղիոյ Ազատականներէն եւ թերթերէն ունանք շատ հաւանական կը համարին թէ Չինական խնդիրը որ այսքան յանկարծակի ծագեցաւ՝ Եւրոպական մեծ պատերազմի մը պիտի յանդիս Բայց անուշք որ ամենէն աւելի կը ճանչնան զՉին՝ կացութիւնն այնքան ծանր չեն նկատեր: Թէ Չին կը յուսայ ինք վճակել իր ճակատագիրը՝ յայտնի է Չինական մեծագոյն քաղաքէս Լի Հունկ Չանկի նորագոյն դիտողութիւնէն: Նա ըսաւ թէ Չին կ'ուզէ խողաղութիւն, բայց ա'լ աւելի կ'ուզէ իր հողերը պահպանել յարձակման զէմ: Լոնտոնի Թայլըզ թերթը կը համարի թէ Անգղ. չահերուն մեծագոյն վըտանդը կը կայանայ Ռուսիոյ Չինէ մասնաւոր արտօնութիւններ ստանալու պատահականութեանց մէջ: Ուստի կ'ըսէ թէ, եթէ Ռուսիա ծանուցեալ փոխառութիւնն ընէ Չինու, Չինական վարչութեան ամէն խնդիրներու մէջ Ռուսիոյ միջամտելու իրաւունքը պիտի ապահովուի փոխառութեան իբրեւ երաշխաւորութիւն ցուցուած հողային տրոց դանձման հսկելու հարկին բերմամբ:

Կր հաւատան թէ Անգղիական երկու մարտանաւ Բորդ-Արթիւրի նաւահանգիստը մտնել ուզած ըլլալով, հրամայուեալ են հոն չիկնալ: Այս հրամանին վրայ երկու մարտանաւք հեռացեր են:

ՆՈՐ ԲԻՒՐԱԿՆԸ

Բիւրակն լրագիրը սկսաւ հրատարակուիլ նոր ուղղութեամբ եւ խմբագրութեամբ Տնօրէնութիւնը ստանձնած է Սմբատ Էֆ. Դաթեան: Ա. եւ Բ. թրեւը որոնք լոյս տեսան իրաւունք կուտան յուսալու թէ հանրութեան օգտակար պիտի ըլլայ այս ձեռնարկը, որուն ի սրտէ յաջողութիւն կը մաղթէ ԾԱԴԻԿ:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ազգային եւ օտար վարժարաններու մէջ դասախօսող ինչպէս նաեւ աւելարական հրագրական վրայ երկտառեւ փորձառութիւն ունեցող պատուաւոր սնձ մը, Անգլիերէն եւ Գաղղիերէն թղթակցութեանց եւ Տաճարական օգտակար պիտի ըլլայ այս ձեռնարկը, որուն ի սրտէ յաջողութիւն կը մաղթէ ԾԱԴԻԿ:

ՊՐՊԱՆԻ

ՅՈՒՇԱՏԵՏՐ - ՕՐԱՑՈՅՑ

1898

Ի վաճառ ելած է հետեւեալ գներով:

Ընտիր լաթակազմ 2 1/2 գահեկան:

Նոյնը ոսկեգոծ ճղամով 4 գահեկան:

Նախկէն եւ մատիտով 7 1/2:

Ընտիր թղթի վրայ տպուած 15:

Կեդրոնատեղիք՝ Սուլթան Համամ Պաղատալեան գրատուն թիւ 14 եւ 2. Թորոսեան գրատուն Վալիաթ թիւ 16:

Կր գտնուի Բերա Հայ ծխախման քով, Կալաթա Վրոյրի եւ Ռօմանի թղթալաճատանցը, եւ Պոլիս բոլոր գրալաճատաց քով:

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ԳԼՈՒԽ Ժ.

Պ Ի Տ Ա Վ Ը

Արդէն ես ալ երկար ատեն քեզ հետ չեմ կրնար կե-
նալ, ըսաւ Օհան անհամբերութեամբ:

Տիմիթրօ՝ Օհանին գովամակութիւնը չտեսնել ձեւա-
ցուց եւ երկուքը միասին սենեկէն ելնելով մեկնեցան
տունէն:

Հետեւեալ օրը կէս օրէն երկու ժամ առաջ Օհան
անթերի կերպով մաքուր հագուած Արտն Նէսիմի գրա-
մատունը մտաւ. Գուլա մականուանեալ ստամբակը խա-
նին դրան մէջ կեցած, ընկող կոտորելով ուտելու զբա-
ղած էր, կապիկ մը պէս աչքերը այս ու այն կողմ դար-
ձնելով: Խանին սրճարանին առջեւ աթոռակի մը վրայ
նստած ծերունի բռնակիր մը տեսնելով, մէկէն ի մէկ
կիսովին բերանը բացած բռնակիրը գննել սկսաւ:

— Վայ սատանայ կ'ըսէր մտովի, ես այս դէմքը
պիտի ճանչնամ, բայց ուր տեսած ըլլալս չեմ յիշեր:

Ստամբակը անուշադիր կերպով աւելի մօտեցաւ
բռնակիրին, բռնակիրը որ կ'երեւէր թէ նստած տեղը
կը մրափէ, մէկէն ի մէկ ոտքի ելնելով տառնոց մը նե-
տեց պատուհանին քով դրուած ստակի արկիւղ վրայ եւ
գոմիսի խանին դրան կողմը դառնալով անհրեւոյթ ե-
ղաւ:

— Նզովից արմատ մուտաց Գուլա, եթէ սեղանաւո-
րին գործը չըլլար, ես այս մարդուն ո՞վ ըլլալը կը հաս-
կընայի. հարիւրի գէմ հարիւր գրաւ կը գնեմ որ այդ
բռնակիրը ծագեալ էր. ծերունի մը որքան ալ կայտառ
ըլլայ այնքան շողուն աչքեր չունենար, իրաւ որ տիմար
է այն մարդը որ ծեր չէ ու ծերի նմանիլ կը փորձէ:

Գուլա այսպէս մենախօսելով, մեքենաբար սկսաւ
մատնելովը սրճարանին պատուհանի ապակին թմրկա-
հարել:

Սրճարանին տէրը ներսէն գոչեց,

— Ծօ լաւոտ, ապակին պիտի կոտրես, կորիւր ատ-
կեց, եթէ զուրս ելլամ զլուխդ կը ճզմամ:

— Ողորմած Աստուած դու փրկէ զիս այս փորձան-
քէն, տէր սրճարանապետ եթէ այս եղանակին չի հաւ-
նեցար, ուրիշ եղանակ մը թմրկահարեմ:

Ստամբակը այս ըսածը գործքով ալ կատարելով ա-
ւելի ուժգին թմրկահարել սկսաւ ապակին:

Այս յանդիմութեան վրայ խանութին տէրը բարկու-
թեան կրակ կտրելով, դուրս վազելու միջոցին ստամ-
բակը զարմանալի ճարտիկութեամբ ոտքերու առջեւ ա-
թոռակ մը գլորեց եւ սրճարանին տէրը գետին զլորեցաւ:

Երբ աշակերտը վազելով զինքը կանգնեցուց, Գուլա
արդէն անհրեւոյթ եղած էր:

Այս միջոցին Օհան, Արտն Նէսիմի հետ գործը լմն-
ցուցած ըլլալով, սեղանաւորին հետ գրասենեակին դրան
մէջ երեւցաւ որն որ մեկնելու կը պատրաստուէր, Արտն
խանին դրան մէջ ոտամբակը չտեսնելով, եւ այս բացա-
կայութեան մեկնութիւն մը տալ չկրնալով, խորհեցաւ
Օհանը խօսքի բռնելով ժամանակ վտտակիլ:

Սիրելիդ իմ պարոն, ըսաւ, անշուշտ ուրիշ անգամ
մեզ չէք մոռնար, տէր վկայ այս գործին համար ամե-
նեւին միջնորդէք չափաի բնորոնէի եթէ ձեր բարեկամը
չստիպեր զիս:

— Ձեր իրաւունքը ի դորձ զրիք պարոն... մնաք բարով
ըսաւ Օհան կարուկ կերպով:

— Այս որչափ կ'աճողարէք, փառք Աստուծոյ զեռ
կէս օրին երկու ժամ կայ ըսաւ, ժամացոյցը հանելով.
միանգամայն մաքէն անիծեալ պիտակ կ'ըսէր, ուր կոր-
ուեր է:

— Թէեւ ժամանակը կանուխ է, բայց ես ստիպո-
ղական գործեր ունիմ. . . :

— Աղէկ միտքս եկաւ, վաղուց է որ մեր սիրելի
ապեալին հետ մտերմութիւն հաստատած էք, չիտակը
դո՞ւրիս պէս մարդ է... :

— Օհան չեղակի ակնարկ մը նետեց սեղանաւո-
րին եւ տառնց պատասխանելու սկսաւ զէպ ի դուռը
յառաջանալ. նոյն միջոցին ալ Գուլա դրան մէջ երեւաց,
ճիշդ ժամանակին նստած էր, Արտն քալլ մը հտ մնալով
ստամբակին նշանացի հասկցուց որ հետեւելիք մարդը
այն էր: Գուլա փոխադարձաբար աչքերը քերթեց ու
անյայտ եղաւ:

— Քանի որ այդպէս աճապարանօք մեկնիլ կուզէք
ձեզ չեմ արգիլիր, երթաք բարեւոյ ըսաւ սեղանաւորը,
յետոյ աւելցուց, ի կրկին տեսութիւն, հաւատարմ եմ որ
դարձեալ պիտի տեսակցինք:

Արդ թողլով սեղանաւորը մենք ալ հետեւինք Օհա-
նին:

Գոմիսի խանին րազմութեան մէջէն անցնելու
պահուն, խանին սրճարանին առջեւ նստող բռնակիրը
Օհանին խիստ մօտէն անցնելով, աճապարանօք — Այնա-
ը գնա զիս սպասէ — ըսաւ ու բազմութեան մէջ ա-
նհրեւոյթ եղաւ. Օհան անմիջապէս Տիմիթրօյին ձայնն
ըլլալը ճանչնալով, արագ քալլերով Գոմիսի խանին
դուրս ելաւ եւ ուղղակի Այնալը գննատունը գնաց եւ
սեղանի մը առջեւ նստելով, եղան պրիզօլա մը եւ պնակ
մը ոտքով ապսպրեց:

Գուլա որ բաւական հեռուէն Օհանին կը հետեւէր,
Գոմիսի խանին մէջ բռնակիրին՝ Օհանին մօտենալով
մի քանի խօսք ըսելը աչքէն չէր վրիպած՝ սրն որ յիշ-
եալ բռնակիրին նկատմամբ իւր կասկածներն աւելի սր-
ծարձեր էր, ուստի երբ Օհան Այնալը մօտենալով ճա-
շտեղաններէն միոյն առջեւ նստաւ, Գուլա զայն աչքէ
չվրիպեցնելու համար չէնքին վերի կողմը գտնուած դրան
քովը սքլեցաւ եւ առանց ներսէն տեսնուելու, սկսաւ
ներսը զիսել:

Արտնաւոր Ա. ՍԱՐԳՍԵԱՆ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ. ՍԱՐԵԱՆ

(Նախկին ՊԱՂՏԱՏԻՍԱՆ Տպարան)

Գ. Պոլիս, Սուլթան Համադ 14.